

~~613.95~~  
~~\$ - 22~~

Վ. Ն. ԳԱՅԼԿԵՐ

ԼԻԵՒՆՔ ԱՐՈՂ

ՅԵՎ

ՈՒԺԵԴ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՌԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱՎԱՐՈՒՄ - 1930

Հայոց  
Հայոց  
Հայոց

20 JUL 2010

3333

## I. ՏԱՆՐ ԱՌԱՎՈՏՅԱՆ

### ԺԱՄԱՆԱԿ Ե ՎԵՐ ԿԵՆԱԾ

Ժամի ութը խփեց։ Գրիգորն արթնանում ու ձգվում եւ վեր կենալ չի ուզում։ Հայրն արդեն գործարան եր զնացել, իսկ մայրը թել եր պատրաստում։ Թույրը — Կատարինեն լվացվում եր։ «Մի ծուլանա, Գրիշա, — ասաց Կատարինեն, — արթնացար, իսկույն պիտի վեր կենաս. պառկելուց մկանները թուլանում են, իսկ դու յերկար պառկելով վեր ես կենում վոչ թե ամրապնդված, հանգստացած, այլ ավելի թոշնածթուլացած», — ասաց Կատարինեն, վագեց դեպի Գրիգորն ու վերմակը վրայից վերցրեց։ Գրիգորը վեր կացավ ու լվացվելու զնաց։ Շապիկը հանեց ու սկսեց լվացվել, նա լվաց ձեռքերը, յերեսը, վիզը, ականջները և ողողեց բերանը։ Նա առանց սապոնի լվացվեց. բայց մայրը, վոր նայում եր, թե ինչպես է Գրիգորը լվացվում, ասաց։ «Այդ չեղավ, առանց սապոնի ձեռներդ չեն մաքրվի, իսկ կեղտուա ձեռներով աչքերին ձեռք տալ չի կարելի. վիզդ ու ականջներդ ել լավ լվա»։

Գրիգորը մաքուր-մաքուր լվացվեց, սըրբ-

Հրատ. № 1142

ՊԵՏՑՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐՄԱ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Տեղագործ 3000

Հրատ. № 2312 (բ)

Պատ. № 1279

վեց ու նստեց թել խմելու։ Թեյից հետո վեր կացավ, վերաբկուն ու կը կնակոշիկները հագավ ու դեպի դպրոց ճանապարհ ընկավ։ Նա ուրախ եր քայլում. ձյունը նրա վոտների տակ ճըռճռում եր, իսկ արևի ճառագայթներից փայլում եյին ձյան փաթիլները, կարծես կալծեր եյին արձակում։ Ամբողջ կրծքով Գրիգորը շնչում եր մաքուր ոգը։ Ցըտից նրա այտերը կարմրել եյին։

ԱՌՈՂՋ Ե ՆԱ. ՈՎ ՇՈՒՏ Ե ՎԵՐ ԿԵՆՈՒՄ

### ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՄԵՆՔ ԼՈՂԱՆՈՒՄ ԵՆՔ ԲԱՂՆԻՍՈՒՄ

Հարկավոր ե ամեն որ սառը ջրով լվաց-  
վել. ով սառը ջրից չի վախենում, նա չի մըր-  
սի։ Շաբաթը մեկ անգամ պետք ե բաղնիս գը-  
նալ կամ տանը, տաշտի մեջ տաք ջրով ու սա-  
պոնով մաքուր լողանալ։ Լողանալուց հետո գը-  
լուխը մաքուր սանրով պետք ե սանրել, շորերը  
փոխել և ձեռքերի ու վոտների մատների տեղունկ-  
ները կտրել։

Դուք համա՞խ եք լողանում բաղնիսում։

ՄԻ ՆԱԽԱՏԻՐ ԻՆՉ, ՄԱՅՐԻԿ, ՎՈՐ ՇԱՏ ՍԱՊՈՆ  
ԵՄ ԲԱՆԵՑՆՈՒՄ

Մկրբում յես սովորել եյի շուտ և առանց  
սապոնի լվացվել։ Այժմ յես ամեն որ վիզս ու  
ականջներս սապոնով եմ լվանում։ Ուտելուց  
առաջ միշտ լվանում եմ ձեռքերս, քնելուց ա-  
ռաջ լվանում եմ վոտներս։ ԶԵ վոր վոտքերն  
ամենից շատ են կեղտոտվում։ Շաբաթորն ար-  
դեն ամբողջ մարմինս, ինչպես հարկն ե, լվա-  
նում եմ։ Մայրս միշտ ասում եր. «Մապոնը  
թանգ ե, քիչ փչացըրեք»։ իսկ յես ասում եյի.  
«Մայրիկ, մի տրտնջա, սապոնը մաքուր և ա-  
ռողջ ե պահում, մաքուրթյամբ յես և Գրիշան  
առողջ կլինենք»։ Այս լսելուց հետո մայրիկն ել  
չեր խոսում սապոն բանեցնելու համար։

Ձեր բաղաբում վո՞ր որերին բաղնիս կարե-  
լի յե գնալ։

Ի՞նչ եք վերցնում ձեզ հետ բաղնիս գնալիս։

### ԻՆՉՈՐ ՅԵՍ ՎԱՏ ԵՅԻ ԼՍՈՒՄ

Մի ժամանակ սկսեցի վատ լսել. ուրիշ  
ասածներին անտեղի պատասխաններ եյի տալիս։

Մայրս ինձ բժշկի մոտ տարավ։ Բժիշկն  
ականջս նայեց և ասաց. «Ականջդ բռնվել ե.  
մարդու ականջի անցքում ծծումբ և արտադը-»

վում. ով ականջները չի մաքրում, արտադրված ծծումբը հավաքում, ամրանում ե ինչպես խըցան ու լսողությունը թուլացնում։ Այդպես չի կարելի։ ականջները պետք ե մաքուր պահել—լվանալ, ապա թե վոչ՝ կարելի յե խլանալ։ Հետո նա գեղով ականջս լվաց, և այնուհետեւ ըսկըսեցի լավլաել։ Բժշկի խորհրդից հետո յես ամեն որ ականջներս լվանում եմ։

### Ի՞ՆՉՈՒՍ ԵՐ ԿԱՏԱՐԻՆԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՏՈՒՆԸ ԳՐԻԳՈՐԻ ԴՊՐՈՅ ԳՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ

— ԴԵ, Կատարինե, կառավարիք, — ասաց մայրը—յես շուկա յեն գնում։ Կատարինեն վեր կացավ, լուսամուտի ողանցքը բաց արավ, սավաններն ու վերմակներն աթոռների վրա փուց ողանցքի դիմաց՝ ողին տալու համար։ «Որական տասը ժամ մենք անկողնում ենք անց կացնում. անկողինը մեր յերկրորդ տունն ե, պետք ե վոր մաքուր և ողափոխված լինի», ասում ե Կատարինեն։ Հետո նա թրջած ավելով ավլում ե հատակը, սեղանի և աթոռների փոշին թաց շորով մաքրում, իսկ ամանները տաք ջրով լվանում։

ՄԻ ՄՈՌԱՆ ՈԴԻՆ ՏԱԼ ԱՆԿՈՂԻՆԴ

ԶՈՐ ԱՎԵԼՈՎ ՄԻ ԱՎԼԻ  
ԶՈՐ ԱՎԵԼՈՎ ԱՎԼԵԼԻՍ ՓՈՇԻ ՅԵՍ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ  
ՓՈՇԻՆ ԹԱՑ ՇՈՐՈՎ ՄԱՔՐԻՐ  
ՓՈՇՈՒ ՄԵԶ ՎԱՐԱԿ ԿԼԻՆԻ  
ՓՈՇԻՆ ԱՌՈՇՋՈՒԹՅԱՆ ԹԵՇԱՄԻՆ Ե

### ԽՈՒՍԿՈՒ ՓՈՇՈՒՑ

Գարնանն ու աշնանը տանտիկինները սենյակը մաքրելիս, իրերը լուսամուտի ու դռան մոտ են թափ տալի ու սյունի պես փոշիբարձրացնում։ Այդ լավ չի. շորերը բնակարանից հեռու պիտի թափ տալ՝ բակի մյուս ծայրում։ Փոշին թափ տալիս չպետք ե խոսել, բերանը փակ պետք ե պահել, վորպեսզի փոշին ներս չգնա, իսկ յերեխաններին մոտ չպիտի թողնել։ Վո՞րսեղ պետք ե մայրես վերարկուդ։

### ՏԱՐՎԱ ԲՈԼՈՐ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ ՈԴՆ ՈԳՏԱԿԱՐ Ե

Շուկայից մայրը վերադարձավ, ողանցքը բաց տեսավ և ասաց. «Վորպիս, աշնան խոնավ և անձրև յեղանակին ողանցքը բաց անելու կարիք չկա»։ «Վոչ, մայրիկ, — ասաց Կատարինեն, — բոլոր յեղանակներին ել սենյակն ողափոխության պետք ե յենթարկել. փակ սենյակում ողը շուտ ե վչանում»։ Իսկ փողոցում վորտեղից ե մաքրուր ողը։ Փողոցը վոչ պատ ունի, վոչ ել

առաստաղ. քամին այդտեղ մաքուր ողը գաշտերից և անտառներից ե բերում։ Այստեղ բույսերն ողը մաքուր են. այնտեղ վոչ մարդիկ կան և վոչ ել գործարանի ծխնելուցներ. ողը մաքուր ե։ Հայրիկին պետք ե խնդրել, վոր գյուղաբնակի ժողովում հարց գնի՝ մեր շրջապատում պարտեզներ շինելու ու կանաչ ծառեր տնկելու մասին։

ՄԵԶ, ՅԵՐԵՒԱՆԵՐԻՍ ՀԱՄԱՐ ՇԱՏ ԱՅԴԻՆԵՐ ՏՆԿԵՑԵՔ  
ՈՒ ԿԱՆԱՉ ԱՆԿՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵՑԵՔ

### ԻՆՉՈ՞Ի ՄԱՅՐԻԿՆ ԻՐԵՆ ՎԱՏ ԶԳԱՅ

Մի որ մայրիկը հարեանի տուն գնաց՝ հիվանդի տեսնելու։ Հիվանդի սենյակը փոքր եր, իսկ մարդիկ՝ շատ։ Վոմանք յեկել ելին տեսնելու, վոմանք ել՝ ոգնելու։ Սենյակի լուսամուտները պինդ փակված ելին։ Հանկարծ մայրիկն իրեն վատ ե զգում, գունատվում ե, դողում և քիչ ե մնում՝ վեր ընկնի։ Ինձ ձայն տվին։ Իսկ իսկույն վազեցի այնտեղ, առանց ինձ կորցնելու լուսամուտը բաց արի, սառը ջրով մորս յերեսն ու կուրծքը շիեցի, վոտներն ու ձեռները տրոբեցի, և նա զգաստացավ։ Ահա թե ինչ ե նշանակում փչացած ող շնչել։

Որը բանի՞ անգամ ես ոդափոխում սենյակի։

### ԱՌՈՂՋԱՐԱՐ Ե ԱՐԴՅՈՒ ՇԱՏ ՏԱԲ ՍԵՆՅԱԿՈՒՄ ԱՄՐԵԼԸ

— Կատարինե, փայտ բեր, վառարանը վառենք, — ասաց մայրը։ «Հարկավոր չի, մայրիկ. յերբ դու շուկա գնացիր, յես վառարանը վառեցի»։ «Ո՞ւր ե, բա ինչու սենյակը տաք չի»։ «Բավական ե, սենյակը բաղնիս դարձնել չի կարելի։ Բժիշկը մեզ բացատրեց, վոր տաքության սովորելը վնասակար ե՝ վատ ենք սովորում ու շուտ մրսում։ Իսկ յես ու Գրիշան ուզում ենք առողջ և ամուր կազմվածք ունենալ՝ քեզ ու հայրիկին փոխարինելու համար»։ «Այ թե ինչ, ճուտիկը մորը բան ե սովորեցնում», ասաց մայրը ծիծաղելով։

Դուք ջերմաչափ ունե՞ք։

Քանի՞ ասիման ե ցույց տալիս ջերմաչափը տանը յեվ դպրոցում։

### ԶԵՐՄԱՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Գուցե լսած լինեք, վոր մարմինները տաքությունից լայնանում են, իսկ ցրտից՝ սեղմը վում։

Սնդիկ ել տեսած կլինեք: Մարմինների լայնանալու ու նեղանալու հատկությունից ոգարվելով ջերմաչափ են պատրաստում. վերցնում են մի ապակե խողովակ, վորի ներքին մասը գնդաձե ու լայն ե և փակ, սնդիկով լցնում են ու վերի ծայրն ել փակում: Հետո խողովակը մի մաքուր տախտակի վրա փակցնում ու սառուցի մեջ դնում: Ցըտից սնդիկը սեղմվում ու ցած ե իջնում: Այս ուղղությամբ, վորտեղ սընդիկը կանգ ե առնում, տախտակի վրա զերո(Օ) նշանն են դնում: Խողովակը սառցի միջից հանում են ու կամաց-կամաց տաքացնում. Տաքությունից լայնանալով, սնդիկը բարձրանում ե: Յեթե խողովակը զգուշությամբ յեռացող ջրի գոլորշների մեջն իջեցնենք, սնդիկն արագությամբ կբարձրանա մինչև վորոշ տեղ ու կանգ կառնի. Սնդիկի կանգնած բարձրության ուղղությամբ, տախտակի վրա զրում են հարյուր (100) թվանշանը: Հետո զերոյի ու հարյուրի միջև յեղած աարածությունը գծիկներով բաժանում են հարյուր հավասար մասի: Ամեն մի մասն աստիճան ե կոչվում: Ալղպիսի ջերմաչափը Յելսիուսի ջերմաչափի ե կոչվում—շինողի անունով:

Դասարանում ջերմության աստիճանը 13 ալետք ե լինի: Ավելի բարձր աստիճանում քննելն անգամ լավ չի: Մարդու մարմնի նորմալ տաքությունը 37՝ պետք ե լինի\*). յեթե տաքությունը գրանից բարձր ե, նշանակում ե նա հիվանդ ե:

\*.) Մարդու մարմնի տաքությունը չափելու համար կործեն ածում ուրիշ ձեր ջերմաչափներ:

## II. ԴՊՐՈՑՈՒՄ

### ԳՐԻԳՈՐԸ ՀԵՐԹԱՊԱՀ

Այսոր գասարանի հերթապահը Գրիգորն եւ Նա պետք ե շուտ դպրոց գա ու, դասն սկսելուց առաջ, նայի, թե արդյոք բոլոր յերեխաների ձեռքերը, ականջները, վղերը, հագուստները մաքուր են, թե վոչ: Բոլորը թաշկինակ կամ ձեռքի մաքուր շոր ունեն: Պետք ե ջերմաչափին ել նայի, զոր դասարանի տաքությունը 13 աստիճանից պակաս չլինի: Դասամիջոցներին պիտի լուսամուտի ողանցքը բաց անի: Այդ որն աշակերտների ծաղիկը ծեծում ելին: Գրիգորն ել շատ բան ուներ անելու:

Ո՞Վ Ե ԶԵՆՆԵՐԸ, ՅԵՎ ԻՆՉՈ՞Ի ՀԱՄԱՐ ԵՆ ԾԱՂԻԿԸ  
ԾԵԾՈՒՄ

18. ըդ գարի վերջին անզլիացի մի բժիշկ եր ապրում՝ Զեններ ազգանունով: Մարդկանց նա սովորեցրեց կովել ծաղիկ դեմ, վորից առաջներում շատ մարդիկ ելին մեռնում: Ծաղկով հիվանդանալու ժամանակ մարմի վրա թարախով լիօը բշտիկներ են գոյանում: Յերեկի տեսած կլինեք ծաղկատար (չոփուռ) դեմքով

մարդկանց: Նրանք հիվանդացել են ծաղիկ կոչված բնական ու ծանր հիվանդությամբ, վորից հետո նրանց դեմքն այդպես ալանդակ ծաղկատար ե դարձել:

Բժիշկ Զեններն առաջին անգամ փորձ ե անում հորթի վրա՝ նրա ծաղիկը ծեծելով: Հորթը առողջանում ե ու ծաղկահար չի լինում: Հորթի ծաղիկի բշտիկի հեղուկով Զենները մարդկանց ծաղիկն ե ծեծում, վորոնք այդ հիվանդությամբ չելին հիվանդացել, և լավ հետևանքի յե հասնում: Ծաղկի բշտիկները միայն ծեծած տեղն են գոյանում ու շուտ լավանում: Դրանից հետո մարդը մոտ յոթ տարի ծաղկով չի հիվանդանում: Նշանակում ե, վոր յոթը տարին մեկ անգամ մարդկանց ծաղիկը պետք ե ծեծել, վորպեսզի նրանք ալևս չհիվանդանան:

•Բանի՞ անգամ են ծաղիկի ծեծել:

ԻՆՉՊԵՍ ՄԵՆՔ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ԱԿՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԻՆՔ

Բժիշկը կարգադրեց հերթապահին մեծ դասամիջոցին աշակերտների ընդհանուր ժողով հըրավիրել: Նշանակված ժամին յերեխաները հավաքվեցին ու ժողովի նախագահ ընտրեցին Սարգսյանին: Բժիշկը խոսք վերցրեց և ասաց, վոր դպրոցում հարկավոր ե մաքրության և առող-

ջության անկյուն կազմակերպել, ուր պետք է կախ արվեն աշակերտաների մաքրության և առողջության վերաբերող զանազան տեղեկություններ:

Ժողովը վորոշեց անկյուն կազմակերպել, հարկավոր պլակատներն ու դիագրամներն իրենք աշակերտաները պատրաստեն: Ինձ հանձնարարեցին աղյուսակ կազմել ատամների մաքրության մասին: Բոլոր աշակերտներին հարցուփորձ արի և դուքս յեկավ, վոր մեր դասարանի տասնեխնն աշակերտից՝

4-Ը ԲՈԼՈՐՈՎԻՆՁԵՆ ՄԱՔ-  
ՐՈՒՄ ԻՐԵՆՑ ԱՏԱՄՆԵՐԸ

5-Ը ՅԵՐԵԲԵՄ ԵՆ ՄԱՔՐՈՒՄ

10-Ը ԱՄԵՆ ՈՐ ԵՆ ՄԱՔՐՈՒՄ

Առաջին չորս աշակերտի ատամները կեղ-  
տու տեսնելով, բժիշկը կարգադրեց ձնողական  
ժողովի ժամանակ առաջարկել նրանց ձնողնե-  
րին՝ ատամի խողանակ ու սպիտակ փոշի առ-  
նեն և հետևեն, վոր յերեխաներն ամեն որ ի-  
րենց ատամները մաքրեն:

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՈՒՄԻ ՊԼԱԿԱՏՆԵՐ ՊԵՏՔ Ե ԿԱԽ ՏԸՐ-  
ՎԵՆ ՄԵՐ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ԱՆԿՅՈՒՆՈՒՄ

1. ՄԵԶ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԼՈՒՅՍ ՅԵՎ ՈԴ. ԱՌԱՅՑ ԴՐԱՅՑ  
ՄԵՆՔ ԿՅԻՎԱՆԴԱՆԱՆՔ

2. ԱՄՐՈՇ ԲԱՑ ԱՐԱ ԼՈՒՍԱՄՈՒՏԸ, ԻՎԿ ՁՄԵՌԸ—ՈԴԱՆՑՔԸ

3. ԱՎԼՈՒՄ ԵՍ ԱՎԼԻ, ԲԱՑՑ ՓՈՇԻ ՄԻ ԲԱՐՁՐԱՑՆԻ

4. ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՄԱՔՐՈՒՄ ԼՎԱՑՎԻՐ—ԼԱՎ ԿԲՆԵՍ

5. ՎԱՐԱԿԸ ՏԵՍԱՆԵԼԻ ԶԵ, ԲԱՑՑ ԶԵՌԵՐԻՆ ԿՊՉՈՒՄ Ե

Զեր դպրոցում մաքրության յեվ առողջու-  
թյան անկյուն ունե՞մ, թե վոչ:

Ի՞նչ պլակատներ են կախ տված ձեր դրա-  
դոցում:

**ԹՈՒԼԱՄՈՐԹ ԶԵՄ ՅԵՍ**

Զեռս ու վոտս միշտ մաքրուր և,  
Ատամներս մարգարիտ,

Գլխիս վրա միշտ կրում եմ  
Ու սանրվում սանրով խիս:

Բերանս փակ, կուրծքս միշտ բաց  
Յեզ շնչում եմ յես քթով.  
Թող զուր խոսեն, վոր կմըսեմ—  
Բեզզաղե\*) չեմ մոռւթով:

Յողաշաղաղ մարգի միջով  
Յես անցնում եմ վոտաբաց,  
Յեկեք տեսեք ով ե կոված,  
Դիմացկուն ու սրընթաց:

Չեմ վախենում դաշտի քամուց,  
Հաճույքով եմ յես շնչում,  
Իսկ քրտնահոտ, կեղտոտ ոդից  
Միշտ հեռու յեմ յես վախչում:

### ՇԱՏ ՏԱՔ ՄԻ ՀԱԳՆՎԵՐ

Ամառը յես վոտաբորիկ ու գլխաբաց եմ  
ման գալիս: Յերբ ցուրտ ե լինում, վոտնաման-  
ներս հագնում եմ, վոր վոտներս չմըսեն ու չը-  
խոնավանան: Վիզս ու կուրծքս ձմեռն ել շատ  
քիչ եմ փաթաթում: Մանկությունից սովորել  
եմ թեթև հագնվել ու սառը ջողվ լվացվել: Դրա


\*) Բեզի տղա:

համար ե, վոր ուրիշների պես ամեն մի թեթև  
քամուց չեմ մրսում ու հիվանդանում:

ՅԵՍ ՎՈԶ ՄԱՏՍ ԵՄ ԲԵՐԱՆՍ ՏԱՆՈՒՄ, ՎՈԶ ՄԱ-  
ՏԻՏՍ, ՎՈԶ ԵԼ ՄԻ ՈՒՐԻՇ ԲԱՆ, ՎՈՐ ԿԱՐՈՂ Ե  
ԿԵՂՏՈՏ ԼԻՆԵԼ

Մատներով մենք ամեն բանի ձեռք ենք  
տալիս, ամեն բան վերցնում — դանակ, մատիտ,  
գիրք, քար, պտուղ. շոյում ենք կատվին, շանը,  
հորթին, դառին, և այդ բոլորը փոշոտ են, վոր  
մենք հաճախ չենք նկատում կամ ուշ չենք  
դարձնում: Շոշափած ամեն մի բանից մեր մատ-  
ների վրա միքիչ փոշիչ յե մնում, և մատները բե-  
րանը տանելիս, նրա հետ զանազան հիվանդու-  
թյունների սաղմեր ենք տանում ու կուլ տա-  
լիս: Փոշու մեջ բազմաթիվ վարակիչ բակաերի-  
աներ կան: Նույնն ե կատարվում մատիտը բե-  
րանը տանելիս, յեղունկները կըծելիս և այն:  
Մատիտը բերանը տանելու և յեղունկները կըր-  
ծելու համար մեր գպրոցում աշակերտներին  
տու գանում են և այդ փողն անապաստան յերե-  
խաներին ոգնող կոմիտեի դրամարկղը մուծում:

Չեր դպրոցում յեղունկներ կրծող յեվ մա-  
տիտը բերան անող աշակերտներից անապաս-  
տան յերեխաների ոգտին տուգանք վերցնում են:



ԻՆՉՈՎ ԵՆ ՎԱՍԱԿԱՐ ՄԻՋԱՏՆԵՐԸ ՅԵՎ Ի՞ՆՉՈՐԵՍ  
ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ՆՐԱՆՑ ԴԵՍ

ՃԱՆՃԵՐԸ, ՎՈԶԻԼՆԵՐԸ, ԼՎԵՐԸ, ՓԱՅՏՈԶԻԼՆԵՐՆ ՈՒՄՈՇԱԿ-  
ՆԵՐԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԱՇՈՂՆԵՐ ԵՆ,  
ՎՈԶՆՉԱՑՑՐԵՔ ՆՐԱՆՑ

1. Ճանճերը տարածում են՝ փորովայնային տիֆ (брюшной тиф) ու խողերա հիվանդությունների վարակը: Նրանք ամեն բանի վրա իջնում են—հացի, մսի, կերակրի, ջրի և իրենց գոներով, թերով, կնձիթով կպչելով սրանց՝ կարող են վարակել այդ բոլորը, վորից հետո և մարդն ե վարակվում—հացը, մսը, կերակուրն ուտելով և ջուրը խմելով: Յեթե մենք ուզում ենք, վոր քիչ ճանձ լինի, և դրա հետ միասին պակասի նրանց միջոցով տարածվող հիվանդությունների թիվը, հարկավոր ե ամեն բան մաքուր պահել—սենյակը, ամանները, բակը, անգամ արտաքնոցը: Դուք բոլորդ տեսած կլինեք, վոր ճանճերը միշտ անմաքուր տեղերում են լինում:

2. Վոջիլները բծավոր ու վերադարձ տիֆի վարակն են տարածում: Հիվանդին կծելուց և նրա արյունը ծծելուց հետո վոջիլն իր մեջ ունենում ե այդ հիվանդության բացիլները: Հետո

անցնում ե առողջին, կծում ու վարակում նըրան: Վոջիլներից ազատվելու ամենալավ միջոցն ե՝ մաքուր պահել մարմինը, սպիտակեղենը, հագուստն ու մազերը: Սպիտակեղենը շաբաթը մի անգամ պիտք ե փոխել գլուխը շուտ-շուտ լը-վանալ, յազերը մաքուր սանրով ամեն որ սանրել, անկողինը հաճախակի թափ տալ գրսում և յերկու շաբաթը մեկ անգամ բաղնիս գնալ:

3. Լվերն ապրում են պատերի ու հատակի ճեղքերում: Նրանք փոշով (հողով) են սնվում: Յեթե սենյակը լավ ե մաքրած, քիչ փոշի կա, լվերի համար ապրելը դժվար ե: Նշանակում ե՝ վորքան մաքուր ե բնակարանը, այնքան քիչ լվեր կլինեն:

4. Վտանգավոր են և մոծակները: Նրանց մի տեսակը մալարիա (տաքոց-դողոց) հիվանդություն տարածողն ե: Յերբ նա հիվանդին կծում ե, արյան հետ մոծակի ստամոքսն ե ընկնում այդ հիվանդության վարակը: Կծում ե մոծակը և առողջին, և վարակն անցնում ե նրա արյան մեջ ու հիվանդացնում:

Մոծակները ձու յեն ածում կսնանած ջրերում, լճերում, առուներում ու ջրի տակառներում: Ձմեռը նրանք ջրերումն են անցկացնում, իսկ գարնանը, յերբ արելը ջրերը տաքացնում ե, ջրերից փոքրիկ մոծակներ են դուրս գալիս և

ալս ու այն կողմը տարածվում։ Ճիշտ ե, ծիծեռնակները, չղջիկները և ուրիշ թուչուններ վորսում են մոծակներին, բայց բոլորին վոչընչացնել չեն կարող։ Մոծակներին կարելի է վոչընչացնել՝ ճահիճները չորացնելով ու լճացած ջրերի մեջ նավթ լցնելով։ Նավթից մոծակների թրթուրները վոչնչանում են։

Կան և ուրիշ միջատներ, ինչպես, որինակ՝ շնաձանձը, փայտոջիլը և այն, վորոնք զանազան հիվանդություններ են տարածում և մարդկանց կծելով, մարմնի վրա վերքեր առաջացնում։

ԿՈՐԶԵՆ ԲՈԼՈՐ ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻՋԱՏՆԵՐԸ

### Ի՞ՆՉՊԵՍ ՃԻՃՈՒՆ (ՓՈՐԻ ՎՈՐԴԸ) ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵՑ ԱԼԻՔՆԵՐԻ ՄԵԶ

**Մի** ժամանակ սիրտս սկսեց խառնել։ Մալրս գիտեց արտաթորությունս և այնտեղ ինչվոր սպիտակ կտորներ նկատեց։ Բժիշկն այդ տեսավ և ասաց. «Փորի վորդի մասերն են այդ. աղիքներում վորդը գորացել է վատ յեփած միս կամ ձուկ ո տելուց։ Այդ վորդը բնակություն ե հաստատում աղիքներում ու կերակրվում ե այնտեղ յեղած հլութով. յերբեմն միքանի մետք յեր-

կարություն ե ունենում և կոչվում ե պարագիտ, այսինքն ուրիշի հաշվին ապրող»։ Բժիշկն ինձ խմելու դեղ տվեց։ Դեղը գործածելուց հետո ճիճուն ամբողջությամբ դուրս յեկավ, և յես առողջացա։

ԹՈՒՅԼ ՄԻ ՏԱՔ ՇՆԵՐԻՆ ՈՒ ԿԱՏՈՒՆԵՐԻՆ ՁԵՌՔՆԵՐԴ ԼԻԶԵՆ.  
ԱՅԴ ՄԻԶՈՑՈՎ ՊԱՐԱԳԻՏՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՄՑՆԵԼ ՁԵԶ ՎՐԱ

## Ի՞նչո՞ւ ՊԵՏՔ Ե ՔԻԹԸ ՄԱՔՐԵԼ

### III. ԴՊՐՈՑԻՑ ՀԵՏՈ—ՏԱՆՅ

#### ՀԱՇԵԼԻՄ

Դպրոցից Գրիգորը տուն յեկավ: «Դե, զավակս,—ասաց մայրը—ձեռքերդ լվա և յեկ ձաշիր»: «Ձեռքերս մաքուր են»: «Վոչ, չի կարելի—մեջ մտավ Կատարինեն,—դպրոցում հազար բանի ձեռք ես տվել, կարող ե պատահել, վոր վարակվես. վարակը չի յերևում, բայց ձեռքին կը պած ե լինում. կերակուր ուտելիս բերանդ կը տանես ու կհիվանդանաս»:

Գրիգորը ձեռքերը լվաց ու ճաշի նստեց: Նա շտապում եր ու կերակուրը կիսածամել կուլ եր տալիս: «Գրիշա, —ասաց մայրը, —վորպեսզի կերակուրը ստամոքսում ճեշտ ու լավ մարսվի, պետք ե ատամներով լավ ծանել, իսկ դու շտապում ես ու կիսածամել կուլ տալիս: Այդ լավ չի, վորդիս, լավ ծամիր, վոր հետո ըստամոքսդ չցավի»: Ճաշեց Գրիշան ու դուրս վազեց խաղալու:

ՈՒՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԶԵՌՔԵՐԴ ԼՎԱ.

ԿԵՐԱԿՈՒՐԸ ԲԵՐՆՈՒՄԴ ԼԱՎ ԾԱԽԻՐ

Գրիգորը խաղը վերջացրեց ու տուն յեկավ: Ուզեց բիթը մաքրել ու միանգամից, վորքան կարող եր, յերկու քթանցքներին ուժ տվեց ու զոռից կարմրեց: «Քիթն այդպես չեն մաքրում, ասաց Կատարինեն,—ծածկիր մի քթանցքը և ուժ տուր մյուսին, և ընդհակառակը: Յերկու քթանցքից միանգամից խնչելը վնաս ե»:

#### ԳՐԻԳՈՐԸ ԽՆԴԻՐ Ե ԼՈՒԾՈՒՄ

Գրիգորը նստեց դասպատրաստելու—խնդիր լուծելու: Խնդիրն այս ե. տոննը յերեք հարկ ունի: Այն հարկում յերկու բնակարան կա. ամեն մի բնակարան յերկու սենյակ ունի: Մի սենյակում 2, իսկ մյուսում 1 լուսամուտ կա: Քանի ողանցք պետք ե շինի վարպետը, վորպեսզի բոլոր սենյակներում հնարավոր լինի ու դափոխություն կատարել.

#### ԳԻՐՔԸ ԶԱՂՏՈՏԵՍ

Մութն ընկավ: Ճըադը վառեցին: Գրիգորը լապի մոտ նստեց՝ գիրք կարդալու. մի յերես կարդաց, մատը թքոտեց ու շուռ տվեց թերթը: «Գրիշա, —ասաց Կատարինեն,—ինչու յես գիրքն աղտոտում: Գիրքը զրադարանին ե, յեթե ա-

մեն մեկն այդպես աղառոտի, գրքի բոլոր յերես-  
ները կեղտով կցվեն. բացի այդ կարող ե և գա-  
րակ լինել: Այդպես չի կարելի, լավ չես անում:

ԳՐՄԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԸ ՀԱՍՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆ Ե.  
ԹԵՏՔ Ե ԽՆԱՍԵԼ ԱՅՆ ՈՒ ՄԱՔՈՒՐ ՊԱՀԵԼ

### ՈՒՏԵԼԻՔԸ ՅԵՐԲԵՔ ԲԱՑ ՄԻ ԹՈՂՆԻ

Կատարինեն ընթըրելու պատրաստություն  
տեսավ: Նա սփռոցը գցեց, հացը կտրեց, կանա-  
չին ու պանիրը դրեց ու բոլորը ծածկեց: «Հըս  
ուտելու յենք, ինչու յես ծածկում», — ասաց  
Գրիգորը: «Մինչև ուտելը կարող ե փոշոտվել,  
ճանձերը կկեղտոտեն. չե վոր նրանք ամեն բա-  
նի վրա իջնում են, և կարող ե պատահել, վոր  
վարակեն:

Չեր տանն ուտելիքը ծածկում են:

### ԸՆԹՐԵԼԻՍ

Խոհանոցից մայրը յեկավ: Նա այնտեղ լը-  
վացք եր անում: Առաջ մայրս սենյակումն եր  
լվանում. յերբ բժիշկն արդ տեսավ, խորհուրդ  
տվեց սենյակում լվացք չանել, վորովհետեւ ջրի  
գոլորշուց սենյակը խոնավանում ե, խոկ խոնավ  
սենյակում ապրելը վնաս ե, Մայրս լսեց բժշ-  
կին և ել սենյակում լվացք չեր անում:

Հայրը գործարանից վերադարձավ՝ մի կա-  
պոց ձեռին: Գրիգորը տեսավ, վաղեց դեպի  
հայրը և ասաց. «Հայրիկ, ի՞նչ ես բերել: «Ափ-  
սեներ եմ բերել, վոր ամեն մեկս առանձին ափ-  
սեյից ուտի: Այսոր գործարանում բժիշկը մեզ  
դասախոսություն եր կարգում. նա բացատրեց,  
վոր պետք ե քնել առանձին անկողնում, առան-  
ձին ամանից պետք ե ուտել և առանձին սրբի-  
չով սրբվել: Վաղն ել մի ուրիշ կուժ եմ բերե-  
լու, վոր մեջը յեփած ջուր պահենք: Բժիշկն ա-  
սաց, վոր հում ջուր խմելը վնաս ե, մեջը վա-  
րակ կարող ե լինել»

ՀՈՒՄ ԶՈՒՐ ՄԻ ԽՄԻՐ

ԱՌԱՋԻՆ ԱՄԱՆԻՑ ԿԵՐ

### ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԱՏԱՄՆԵՐԻ ՄԱՔՐԻՇ

— Գրիշա, չմոռանաս քնելուց առաջ ա-  
տամներդ մաքրել», — ասաց հայրը: Գրիգորը գա-  
րակից վերցրեց ջրով լիքն ամանը, վորքիկ խո-  
ղանակն ու փոշին և սկսեց ատամները մաքրել:  
«Խոզանակը վերից վար քսիր և վոչ թե աջից  
ձախ, ապա թե վոչ, ատամների արանքում յե-  
ղած կերակրի մնացորդը չի մաքրվի. դրանից  
ատամներդ կցավեն, կթափիվեն, և դու փոքրիկ  
հասակում անատամ պառավ կդառնաս»:

## ՎԱՂ ՊԱՌԿԻՐ

Մաքուր պառկիր—մաքուր անկողնում

Գրիգորը պատրաստվեց քնելու։ Աստամերը  
մաքրեց, բերանը լվաց, բաժակն ու խողանակը  
տեղը դրեց, վերցրեց իր սրբիչը, վոր առանձին  
կախ եր տված մեխից, մաքուր յփացվեց, տեղը  
մտավ ու հանդիսաւ քնեց։

— Դե, աղջիկս, ապրես, լավ ես յերգում,  
բայց քնելու ժամանակն եւ կավ ե շուտ քնել  
ու շուտ վեր կենալ։ Ավելի լավ ե միաժամա-  
նակ պառկել, շուտ կքնես։

## ՈՐՈՐ

Որոր, որոր ու որոր,  
Լսիր, բալիկ, յերգս նոր.  
Յերգիս ականջ դիր, ականջ.  
Միշտ ել ուտելուց առաջ  
Զեռն ըդ լվա շուտ-շուտ.  
Միշտ բաց պահի լուսամուտ,  
Առատ ծծիր մաքուր ոդ,  
Վոր չմնաս հիվանդոտ։  
Որոր, որոր ու որոր,  
Միշտ պահիր յերգս նոր.  
Զինջ շողերից արկի  
Կառողջանաս ավելի։  
Որոր, որոր ու որոր,  
Բալիկ, հիշիր յերգս նոր։

## IV. ՎՈՐ ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐՆ Ե ԼԱՎԸ

5. ըդ աշխատանքային գպրոցը յերեկույթ  
եր կազմակերպել։ Գրիշան իր գասընկերների  
հետ այդտեղ գնաց։ Այդ գպրոցի պատի լրագը-  
րում ել մաքրության և առողջության բաժին  
կար, վորտեղ զրված եր՝ հետելալը.

ԶԵՐՔ ՏԱԼԵ ՎԵՐԱՆՈՒՄ Ե.

Մարդիկ շատ սովորություններ ունեն, վո-  
րից գժվար են ազատվում։ Սովորություններից  
մեկն ել իրար պատահելիս կամ հեռանալիս  
ձեռք տալն եւ Դուք, յերեխաններ, թողեք այդ  
սովորությունը։ Մարդկանց ձեռքերը միշտ մա-  
քուր չեն լինում և ձեռք տալիս կարող են մեկ-  
մեկու վարակել ու հիվանդացնել. վարակը ձեռ-  
քից հեղաղությամբ մարդու բերանն ե ընկնում։

ՈՒՐ ԱՐԵՎՆ ՈՒ ԼՈՒՅՍԸ ՄՈՒՏՔ ԶԵՆ ԳՈՐԾՈՒՄ,  
ԱՅՆՏԵՂ ԲԺԻՇԿԸ ՀԱՑԱԽ Ե ՄՏՆՈՒՄ

Յերեխանների (և մեծերի) առողջության  
գլխավոր պայմանն արեն ու լույսն են։ Մեր

մայրերն այս բանը չեն իմանում և հաճախ սե շորով լուսամուտը ծածկում են, վոր արևը ներս չընկնի: Նույնն են անում և շատ լուսի ժամանակ: Այդ վաս ե. պետք ե աշխատել, վորքան հնարավոր ե, լուս և արև շատ լինի բնակարանում: Յեթե ձեր ընակարանը մեկից ավելի սենյակ ունի, յերեխաներին ամենալուսավոր և արեստ սենյակում քնեցրեք, իսկ յեթե մի սենյակ ե՝ արեի ու լուսի կողմը: Ինչքան շատ ե արեն ու լույսը, այնքան յերեխաներն առողջ կլինեն և ընդհակառակը:

### Ի՞ՆՉՈՒԵՍ ԵՐ ԽՆԱՄՈՒՄ ՍԻՐՈՒՇՆ ԻՐ ՓՈՔԻՒԿ ՔՐՈՉԸ

Սիրուշի մայրը հիվանդացափ, Նրան հիվանդանոց տեղափոխեցին: Հիվանդանոց տանելիս մայրը լաց յեղափ և ասաց. «Բա ով պետք ե խնամի փոքրիկ նունիկիս»: „Անհոգ կաց, մայրիկ, յես նրան կիսնամեմ”, — ասաց Սիրուշը:

Նունիկին կերակրել եր պետք: Սիրուշը կերակուր պատրաստեց, գդալով վերցրեց, վոր ուտեցնի, մին ել մտածեց. «Սպասիր տեսնեմ, կերակուրը տաք չլինի», ասաց ու գդալը բերանը դրեց, կեսը կերափ և ազա նունիկին տվեց:

Սիրուշի արածը նի՞շ եր:  
Յեթէ վոչ, բացատրի՛ ինչու:

### ՍՈՎՈՐԻՐ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՇՆԶԵԼ

Որական յերկու անգամ, բաց ողում կամ լուսամուտը բաց ժամանակ, մենք սովորում ենք կամաց ու խորը շնչել: Ահա թե ինչպես ենք մենք այդ անում: Ներշնչելիս բարձրանում ենք վոտների մատների վրա, արտաշնչելիս իջնում ենք կրնկների վրա: Արտաշնչելիս պետք ե աշխատել վորքան հնարավոր ե դուրս հանել թոքերից արդեն ոգտագործած ողը, իսկ նրա տեղը թարմ ող ներշնչել:

### ՓՈՂՈՑԻՑ ԿԵՆՏ ՈՒ ՓՈՇԻ ՍԵՆՅԱԿ ՄԻ՛ ԲԵՐ

Տների առաջ, դռների մոտ յերկաթե ցանցեր կամ այլ տեսակի վոտնասրբիչ գրեք: Սենյակ մտնելիս ցանցի վրա վոտներդ մաքրեցեք: Ավելորդ կեղա ու փոշի սենյակ մի բերեք. Կեղա ու փոշու մեջ վարակ կա:

### ԻՆՉՈՒԻ ԿՈՏԻԿՆ ԱՆՏԱՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՐ ՍՈՎՈՐՈՒՄ

Կոտիկն անտառում գտնվող դպրոցում եր սովորում: Այնտեղ լավ ե սովորելը: Նա մեզ պես փակ սենյակում չի նստում: Այնտեղ բաց

ոդումն են պարապում, իսկ յերբ անձրեւ ե գալիս կամ շատ ցուրտ ե լինում, պարապմունքները սենյակ են տեղափոխում, Նրանց սենյակը յերեք պատ ունի, իսկ չորրորդ կողմից բաց ե. Անտառում գտնվող դպրոցում կոտիկը թե սովորում ե, թե բժշկվում. Մեզնում, Խորհրդային Ռուսաստանում այդպիսի դպրոցներ դեռ քիչ են, իսկ Ամերիկայում շատ կան: Հետագայում բացոթիւա դպրոցներ կլինեն և Խորհրդային Հայաստանում:

Բացոթիւա դպրոցներում յերեխաներն իրենց առողջությունն ամրապնդում և սինտեղից առողջ ու զվարթ են դուրս դալիս:

## V. ՏԱՐԱՓՈԽԻԿ (ՎԱՐԱԿԻՉ) ՀԻ- ՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԻՆՉՈ՞Ի ԶՊԵՏՔ Ե ՀԱՏԱԿԻՆ ԹՔԵԼ

Գերմանացի գիտնական Կորնետն ապացուցեց, վոր թոքախտավոր հիվանդների չորացած թուքը նույնպես վարակիչ ե: Այդ բանն ապացուցելու համար Կորնետը հետեւյալ փորձն ե անում: Նա կարգադրում ե թոքախտավոր հիվանդի մահճակալի առաջ մի գորգ (խալիչա) փոել, վորպեսզի հիվանդը գորգի վրա թքի: Յերբ գորգն ամբողջովին թքով լցվում ե, հիվանդին մի ուրիշ սենյակ են տեղափոխում, իսկ գորգը թողնում սենյակում, վոր չորանա: Գորգը չորացավ. գիտնականը կարգադրեց չոր ավելով գորգը սենյակում մաքրել:

Հետո Կորնետն այդ սենյակում քառասուն ութ ծովային խոզ բնակեցրեց՝ վանդակների մեջ պահելով: Սենյակում ապրելով, այդ խոզերից քառասունյոթը թոքախտով հիվանդացան ու սատկեցին:

ԻՆՉՆ Ե ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԹԱՏՃԱՌԸ

Բացի կենդանիներից ու բույսերից, բնության մեջ բաղմաթիվ մանր ելակներ են ապրում, վորոնք հասարակ աչքով չեն յերևում, Նըանց կարելի յե տեսնել մեծացնող ապակիների միջոցով։ Մեծացնող ապակիներով գործիքը մանրադիտակ կամ միկրոսկոպ ե կոչվում։

Մանրադիտակն այդ ելակները միքանի հարյուր անգամ մեծացնում ու տեսանելի յե դարձնում. այդ մանրիկ ելակները բակտերիաներ են կոչվում։

Դրանցից վոմանք մարդու համար ոգտակար են, իսկ վոմանք՝ վասակար։ Այդ վասակար բակտերիաներն են, վոր զանազան վարակիչ հիվանդություններ են առաջացնում։ Յերբ մեկը վարակիչ հիվանդությամբ բռնվում ե, նըր անց շատերը կարող են վարակվել։ Այդ ե պատճառը, վոր դպրոցներում, յերբ աշակերտներից միքանիսը քութեցով հիվանդանում են, պարապմունքները դադարեցնում են։ Քութեցը վարակիչ հիվանդություն ե. յերբ այդպիսի հիվանդություն կա յերեխաների մեջ, պետք ե յերեխաներին արգելել մեկտեղ խմբվել, հակասակ դեպքում հիվանդությունը կտարածվի, և շատերը կհիվանդանան։

Բակտերիաները լինում են փոշու, աղտոտության, կեղաի, թքի, ողի, ջրի և ող բաների մեջ։

ՊԱՍՏՅՈՐԻ ՄԵԴ ԽԵԼՔՆ ՈՒ ՀՈՎՎԻ ՄԵԾ ՍԻՐՏԸ

Ի՞նչպես իմացան մարդիկ բակտերիաների մասին։ Ֆրանսիայում մի գիտնական եր ապրում՝ Պաստյոր անունով։ Նա մեռել է յերեսուն տարի առաջ։ Մինչև Պաստյորը՝ մարդիկ բակտերիաների մասին քիչ բան զիաելին։ Պաստյորն ուսումնասիրեց բակտերիաներն ու գտավ, վոր գրանք են վարակիչ հիվանդությունների պատճառը։ Այն ժամանակվա զիտնականները չելին համաձայնում նրա հետ ու վիճում ելին այդ խնդրի շուրջը։ Ճշմարտությունը Պաստյորի կողմն եր, և զիտնականները կամաց կամաց համոզվեցին ու նրա հետ համաձայնեցին։ Պաստյորը բժիշկներին սովորեցրեց կատաղության դեմ կովելու հատուկ հեղուկ պատրաստել։ Այս հիվանդությամբ մարդիկ հիվանդանում են կատաղած շան կծելուց հետո։ Պաստյորի գտած հեղուկը սրսկելով այդ հիվանդներին՝ վերջիններս ըոլորովին առողջանում են։

Ահա այն մեծ գործը, վոր նա թողեց մարդկությանը։

Այն ինստիտուտի շենքի առաջ, վորտեղ Պաստիորն եր աշխատում, տասնինդ տարեկան մի հովվի արձան և կանգնեցրած։ Այդ հովվին իր մարմնով ազատել ե լեռեխաներին կատաղած չնից, իսկ Պաստյորը նրան բժշկել ե,

### Ի՞ՆՉ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ

Բակտերիաները շատ փոքր են, այնքան փոքր, վոր մի միլլիմետր (մետրի մի հազարերորդ մասն ե) յերկարության վրա թոքախտի մինչև 4,000 բակտերիաներ են տեղափորվում, գնդասեղի գլխի վրա՝ միքանի միլիլուն։ Մի զիտնական հաշվել ե, վոր թոքախտով հիվանդացած մարդու մի ժամվա ընթացքում թքածի մեջ մոտ քսան յերկու միլիոն բակտերիա կա։

### ՎՈՐՆ Ե ՈՒԺԵՂ, ՑՈՒՐՏԸ ԹԵ ԱՐԵՎԸ

Զյան տակ կոխի ձողիկներն եյին պառկած։ Այդպես են կոչվում գերմանացի գիտնական կոխի գոտած բակտերիաները, վորոնք ձողիկի լին նման։

Այդ բակտերիաները թոքախտի բակտերիաներն են՝ գտնված 40-50 տարի առաջ։ Ցըրտության աստիճանը տասի յեր համում, բայց բակտերիաները ձյան տակ կենդանի ելին։ Ցե-

կավ գարունը, տաքությունն ընկավ, ձյունը հալվեց, բակտերիաները տաքացան։ Տաքացան մի որ—թուլացան, իսկ յերկրորդ որը չդիմացան արեկի տաքությանը ու բոլորը կոտորվեցին։

### ԻՆՉՈ՞Ի ՊԵՏՔ Ե ՔԹՈՎ ՇՆՋԵԼ

Շատ յերեխաներ բերանով են շնչում, իսկ այդ վիաս ե։ Բերանով շնչելիս ողն անցնում է շնչափողը և իր հետ փոշի տանում թոքերը։ Փոշու մեջ բակտերիաներ կան. կարող ե պատահել, վոր վարակեն։ Անհրաժեշտ ե միշտ բըթով շնչել։ Քթով շնչելու ժամանակ ողն անմիշապես շնչափողը չի անցնում, այլ քթի միջով։

Քթի մեջ ողը տաքանու ի ե, փոշին մնում ե այնտեղ, իսկ մաքուր ու տաքացած ողն ե թոքերը գնում։

### ԻՆՉՈԹԵՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԻՐԱՐ ՎԱՐԱԿՈՒՄ

Խոսելու ժամանակ մարդկանց բերանից թուք ե թուչում, մանավանդ անատամ ու բարկացած մարդկանց բերաններից, հազարու և փըռըշտալու ժամանակ։ Մեկ-մեկու հետ խոսելիս մարդիկ աննկատելի կերպով թքի փոքրիկ կաթիլներ են գցում իրար վրա և այդպիսով շատ հաճախ վարակում առաջացնում։ Դրա համար առողջապահական կանոններից մեկում ասված

Ե՛ իրար հետ խոսելիս մեկ-մեկու շատ մոտ մի կանգնեք, հազարուց ու փոշտալուց թաշկինակով կամ ձեռքով բերաններդ ծածկեցեք:

ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՍՈՎՈՐԵՑՐԵՔ, ՎՈՐ ՀԱԶԱԼԻՆ  
ՈՒ ՓՈՇՏԱԼԻՆ ԲԵՐԱՆԸ ՁԵՌՔՈՎ ԾԱԾԿԵՆ

### Ի՞ՆՉՔԱՆ ԲԱԿՏԵՐԻԱ ԿԱ ՌԴՈՒՄ

Ողի մի խորանարդ մետրի մեջ կա—քաղաքի փողոցի փոշտ ողում՝ 5,500 բակտերիա, պարտեզի ողում՝ 700 բակտերիա, ծովի մակերեսույթից 74 մետր բարձրության վրա գտնվող ողում՝ 28 բակտերիա:

### ԹՈՔԱԽՏԻ ՄԱՍԻՆ

Թոքախտի մասին լսած կինեք կամ այդ տխտով հիվանդացածներին՝ տեսած: Բուկն ուռչում ե, մեջքը կռանում, հազում: Այդ այն հիվանդությունն ե, վոր կոխի բակտերիաներն են առաջացնում: Յեթե դուք այդ հիվանդի թուքը մանրագիտակով նայեք, շատ բակտերիաներ կը տեսնեք: Գուցե հարց տաք՝ վհբտեղից այդ բակտերիաները թոքերն ընկան: Նրանք մարդու մարմի մեջ են մտնում ողի հետ, հում կաթի ու ջրի միջոցով, վերբերի անցքերով և այլն:

վորպեսզի այդ հիվանդության զարգացումը խանգարվի, հարկավոր ե մաքուր ոդ շնչել, լավ սլնվել, ֆիզկուլտուրալով և այլ խաղերով մարմինն ամրապնդել:

Ահա թոքախտի դեմ կռվելու միջոցները:

### Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԻՆԵՆ ԱՅՑԵԼԵՑ ԸՆԿԵՐՈՒՅՈՒՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

— Կատարինե, ի՞նչպես ե ընկերուհիդ՝ Շուշիկը, — հարցը հայրը: «Վոչինչ, լավ ե, նա պառկած ե հիվանդանոցում, Անցյալ որը յես գնացի հիվանդանոց նրան տեսնելու: Ահա թե վորտեղ ե մաքուր: Ուզում եյի ներս մտնել, քույրն ինձ կանգնեցրեց և ասաց. «Զեր վերաբեկուն հանեցեք. վերնազգեստով հիվանդի մոտ գնալ չի թուլաարվում»: Վերաբեկուս հանեցի, մաքուր խալաթը հագա ու ներս գնացի»: «Խալաթն ինչի՞ համար եր», — հարցը հայրը: ԶԵ վոր հիվանդներին ավելի մաքրություն ե հարկավոր, քան առողջներին, իսկ հիվանդանոց յեկողներն աննկատելի կերպով վարակ կարող են բերել: Այստեղ պատերը յուղաներկով են ներկված՝ տմեն որ լվանում, մաքրում են. հատակը մոմած եր, կարծես հայելի լիներ, բոլորովին փոշի չկար: Անկողինները՝ մաքրում-մաքրուր: Սենլակի անկյուններում բարձր թքամաններ ենին դըր.

տարբերվում են իրենց շարժունությամբ ու բակտերիաներ վոչչացնելու ընդունակությամբ։ Սըրանք հեշտությամբ արյան անոթների պատերից անցնում են ու շարժվում այն կողմը, վորտեղ բակտերիաներ են առաջ գալիս։ Կոփմս սկսվում ե, սպիտակ մարմնիկները շրջապատում են բակտերիաներին ու կլանում։ Բակտերիաները թույն են արտադրում ու մարմինը թունավորում։ Առողջ մարդու արյունը հակաթույն ե արտադրում ու չեզոքացնում անժմաս դարձնում բակտերիաների թույնը և առողջ մնում։ Թույլ ու հիվանդ մարդկանց մոտ այդ տեղի չի ունենում, և նա բակտերիաներից թունավորվելով՝ մեռնում ե:

Վարակիչ հիվանդությունը կոիվ ե մարդու մարմնի ու բակտերիաների միջև։ Ուժեղ մարմինն արագ կերպով հաղթում ե փոքրիկ բայց վնասակար բակտերիաներին, իսկ թույլ մարմինը նրանցից հաղթվում ե։

Ի՞նչո՞ւ ենք ՄԵՆՔ ԿՐՎՈՒՄ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԴԵՄ

Գիտեք, վոր մարդու արյունը հեղուկ ե, նրա մեջ բազմաթիվ մարմնիկներ են լողում։ Նրանցից մի մասը կարմիր, իսկ մյուսը՝ սպիտակ արյան գնդիկներ են կոչվում։ Սպիտակ գնդիկները սովորական բջիջներ, են, ինչպես մարմնի մյուս բջիջները, վոր աղուսի պես իշքար վրա դարսված՝ մեր մարմինն են կազմում։ Արյան, սպիտակ գնդիկները մյուս բջիջներից

Բացի վլասակար բակտերիաներից կան և շատ բակտերիաներ, վորոնք ոգտակար են մարդուն։ Այդ բակտերիաները խմօրը հասցնում են, շիրան յեփացնում ու գինի դարձնում, քացախ պատրաստում, պանիր շինում և ալին։ Դրանք նույնպես աչքով անտեսանելի յեն, սունկեր են կոչվում։

## VI. Ի՞նչ ԵՍ ԱՐԵԼ ԱՄԱՌԸ ԱՌՈՂ- ԶՈՒԹՅՈՒՆԴ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ուսուցիչն աշակերտներին առաջարկեց զը-  
րել, թե ինչ ե արել յուրաքանչյուրն իր առող-  
ջությունը բարելավելու համար։  
Ահա թե ինչ են գրում յերեխաները։

### ՅԵՍ ԱՐԵՎԻ ՏԱԿ ԱՅՐՎՈՒՄ ԵՅԻ

Այառը գյուղ ելի գնացել։ Այնտեղ շատ  
լավ եր։ Ամբողջ ժամանակ խոտերի ու ծաղիկ-  
ների մեջ վազգվում ելի։ Յերկու դիշեր խոտի  
դեղի մեջ եմ քնել։ Արևի տակ յես առանց շապ-  
կի ելի ման գալիս, և այդ շատ առողջարար ե.  
սեացել՝ արաք ելի դարձել։ Գյուղ գնալուց ա-  
ռաջ ինձ թույլ ելի զգում, իսկ հիմա՝ շատ լավ։  
Շուշիկ Ոհաննան

### ՅԵՍ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿ ԵՅԻ ԳՆՈՒՄ

Այառն արձակուրդներին յես քաղաքում  
ելի։ Ամեն որ առավոտյան մանկական հրապա-

րակ ելի գնում։ Հրապարակի ղեկավարը մեղ  
համար զանազան մարզանքներ ու խաղեր եր  
սարքում։ Յերբ առաջին անգամ հրապարակ գը-  
նացի, ղեկավարը ձեռք տվեց թևիս և ասաց.—  
«Ինչըն թույլ մկաններ ունես, կարծես խմոր  
լինի»։ Մարզանքներ ու խաղեր անելով մկան-  
ներս ամրացան։ Մի տես, յերբ թևս ծալում եմ,  
մկաններս քարի պես ամրանում են։  
Վազգեն Գրիգորյան

### ՅԵՍ ԼՈՂԱՆՈՒՄ ԵՅԻ ԳԵՏՈՒՄ

Գաղութի յերեխաների հետ ինձ ուղարկե-  
ցին Զրաղացներ գյուղը։ Գրուղի մոտով մի մեծ  
գետ եր անցնում։ Ամեն որ, թեյ խմելուց հե-  
տո, մենք դաստիարակի հետ գնում ելինք գետի  
ափը, շորներս հանում և արևի տակ մերկ պառ-  
կում։ Դաստիարակը հետեւում եր մեջ, վոր միշտ  
մի կողի չպառկենք, այլ մեկ կողքից մյուսի  
վրա շուռ գանք, վոր մարմնի բոլոր մասերը տա-  
քանան։ Մենք ել հո թոլեթոլ ելինք գալիս գե-  
տափին։ Մի ժամ պառկելուց հետո վեր ելինք  
կենում ու շըշպ՝ շըի մեջ։ Զրի մեջ յերկար չե-  
լինք մնում։ Դաստիարակն ասում եր, վոր Զըի  
մեջ յերկար մնալուց կարող ենք մրսել, իսկ այդ  
վաս ե։ Ահա այսպես անցկացրինք մենք ամա-  
ռը, և վոչվոք մեղնից չհավանդացավ, և հիմա  
յել բոլորս առողջ ենք։ Գեղամ Թափելույան

## ՅԵՍ ԼԱԳԵՐ ԵՅԻ ԳՆԱՑԵԼ

Դպրոցներն արձակելուց հետո քաղաքի պի-  
ոներների հետ յես Ծաղկաձոր գնացի։ Այնտեղ  
մենք վրաններ խփեցինք գյուղից դուրս անտա-  
ռի ու Կաթնաղբյուրի մոտ։ Վորքան գեղեցիկ ե  
անտառը, զով ու մաքուր ող, վորքան կուզես  
շնչիր, վոչ մի փոշի չկա։ Կոլվարը մեզ համար  
որվա կանոններ եր մշակել։ Առավոտյան ժամը  
վեցին վեր ելինք կենում ու մարզանքի գնում։  
Մոտ մի ժամ մարզվելուց հետո գալիս ելինք  
սառն աղբյուրի մոտ, պաղ ջրով մի լավ լվաց-  
վում ու թեյ խմելու նստում։ Թեյից հետո մի  
ժամ հանգստանում ելինք և ապա ողակային  
պարապմունքներն սկսում։ Ծաղիկներ ու բույ-  
սեր ելինք հավաքում, չորացնում։ անցած նյու-  
թերի շուրջը զրույցներ կազմակերպում և այն,  
ձաշից հետո յերկու ժամ հանգստանում ելինք  
և ապա զանազան կոլեկտիվ խաղեր կազմա-  
կերպում։ Քնելուց առաջ մարմիններս սառը ջր-  
ով շփում ելինք ու ժամը 8-ին պառկում ու  
հանգիստ քնում։

Շաբաթական մի օր կոլեկտիվներով մոտա-  
կա գյուղն ելինք գնում և ոգնում զյուղացինե-  
րին՝ կամուրջներ շինում, առուներ ու փողոցներ  
մաքրում ու խոտ հավաքում։ Գյուղացիները շատ

լավ ելին վերաբերվում մեզ։ Ամիսուկես մենք  
անցկացրինք ճամբարում (լագեր) ու վերադար-  
ձանք քաղաք առողջ ու զվարի։  
Լելիկ Հովհաննիսյան

## ՅԵՍ ԱՅԼԵՎՍ ԽԱԿ ՊՏՈՒՂՆԵՐ ԶԵՄ ՈՒՏԻ

Ամառը մորս հետ գնացել եյի գյուղ։ Գյու-  
ղում մենք առւն և այդի ունենք։ Տանը շոգեր.  
հայրս ասավ մայրիկիս. «Ալսեղ շոգ ե, վեր  
առ յերեխաներին ու գնա այգին։ այստեղ թե  
հով ե և թե քիչ փոշի կա»։ Մայրս վեր առավ  
ինձ ու փոքրիկ քրոջս, ու այդի գնացինք։ Այ-  
դում շատ պառղներ կալին՝ խնձոր, տանձ, ծի-  
րան, շոր և ուրիշ պառղներ։ Մայրս ասաց,  
վոր խակ պառղներ չուտենք, թե չե՝ կհիվան-  
դանանք։ Յես չլսեցի մորս և նրանից ծածուկ  
խակ պառղներ եյի քաղում և ուտում։ Միքա-  
նի որից հետո յես հիվանդացա ու պառկեցի—  
փորս լուծ եր։ Մայրս բժիշկ հրավիրեց։ բժիշ-  
կը գեղ տվեց, խմեցի, առողջացա։ Են որվանից  
խրատվել եմ, ել խակ պառղ չեմ ուտում և  
ուրիշներին ել խորհուրդ եմ տալի չուտել։  
Սոֆիկ Մկրտչյան

## ՅԵՍ ԲԺՇԿՎՈՒՄ ԵՅԻ ՂՐԻՄՈՒՄ

Զմեռը վոտքս ցավում եր։ Գնացի բժշկի  
մոտ։ Նա դեղ նշանակեց, բայց բան դուրս չե-

կավ, չոգնեց, Յերկրորդ անգամ գնացի. բժիշկն ասաց, վոր վուկրացավ ունեմ և պետք ե կոմիսսիալի գնամ – սանատորիա ուղարկելու համար. Գարնանը, յերբ բժշկական կոմիսսիան հիվանդներ եր ուղարկում սանատորիաները, դըպոցի վարիչը գրություն տվեց ինձ և ուղարկեց կոմիսսիալի մոտ. Բժիշկները վոտս նայեցին և վորոշեցին ինձ Ղրիմ ուղարկել. Մինչ այդ Ղրիմի մասին յես չգիտեյի:

Անցավ տասնհինգ որ. հարկավոր թղթերն ստացա և ճանապարհվեցի դեպի Ղրիմ.

Ինձ նշանակել ելին Ալուպկայի սանատորիան (Յալտայի մոտն ե): Մինչև Սևաստոպոլ յերկաթուղով գնացի, իսկ են կողմը՝ ավտոմոբիլով. Ավտոմոբիլի ճանապարհը ծովի ափով եր գնում. Սև ծովն եր այդ՝ կապույտ-կապույտ գույնով. Ծովի ափին Ղրիմի լեռներն ելին բարձրանում, վորոնք ծածկված ելին անտառներով:

Իրիկնադեմին հասա Ալուպկա ու տեղավորվեցի մանկական սանատորիայում: Հետեւալ որը բժիշկը վոտքս պինդ փաթաթեց ու գիպսով ամրացրեց: Մի ամիս յես պառկած մնացի, իսկ հետո մանելի գալիս. վոտքս ել չեր ցավում: Այնուհետև ամեն որ գնում ելի Սև ծովի ափն ու մերկ մարմնով պառկում տաք ավազի վրա, առելի վաննա ելի ընդունում: Բժիշկը թուլ չեր

տալիս ինձ լողանալու, իսկ մյուսները համ լողանում ելին ծովում, համ արեի վաննա ընդունում: Մեր բժիշկը մի շատ բարի մարդ եր. բուլորը նրան սիրում ելին: Միքանի որ ել ման յեկա Ղրիմի ամառանոցներում: Ինչքան լավ ե Ղրիմում. գեղեցիկ ծաղկանոցներ, մեծ, սքանչելի պարտեզներ, հրաշալի շենքեր, և այդ բոլորը շրջապատված ե բնական անտառով:

Այնտեղ ինձ պատմեցին, վոր այդ բոլոր լավ-լավ տեղերը նախկին ցարին եր պատկանում: Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ այդ պալատները և ամառանոցները պետականացրին ու սանատորիաներ դարձրին, վորտեղ այժմ բանվորները, գլուղացիներն ու նրանց ընտանիքներն են բժշկվում: Իսկ առաջ, ցարի ժամանակ ո՞վ կարող եր նրանց մոտով անցնել. — պատմում ելին տեղացիները:

Մակար Մակարյան

## Ի՞ՆՉ ԻՄԱՑԱ ՅԵՍ ԴԻՖՏԵՐԻՏԻ ՄԱՍԻՆ

Մենք գյուղը հյուր ելինք գնացել. փոքրիկ քուլը բկացավով հիվանդացավ: Բժիշկը բացատրեց, վոր այս հիվանդությունը դիֆտերիտ ե կոչվում, վարակիչ ու վտանգավոր հիվանդություն ե յերեխաների համար: Բժիշկը հիվանդին դիֆտերիտով հիվանդացած և առողջացած

ձիու արյան շիճուկ սրսկեց (շիճուկն արյան ջըրալի մասն ե): Ազդպիսի ձիու արյան մեջ հակաթույն կա, վորը բակտերիաների թույնը չեղոքացնում ու անմխաս ե դարձնում:

Ինձ մի ուրիշ սենյակ տեղափոխեցին, վոր չվարակվեմ: Յերեխան լավացավ: Մայրս սենյակը մաքրել սկսեց, վոր վարակը վոչնչանա. հատակը, դռւարը, լուսամուտները լվաց ու պատերը սպիտակացրեց:

Անահիտ Գրիգորյան

### ՅԵՍ ՀԱՆԳՍԻ ՏՈՒՆ ԵՅԻ ԳՆԱՑԵԼ

Չքավոր ու թույլ աշակերտների համար կուսժողկոմատը Ստեփանավանում հանգստի տուն եր կազմակերպել: Ուրիշ դպրոցների թույլ աշակերտների հետ ինձ ել հանգստի տուն ուղարկեցին: Յերևանից մինչև Քոլադերան կայրանը սենք յերկաթուղով գնացինք, իսկ են կողմը՝ մինչև Ստեփանավան՝ ֆուրդոնով:

Հանգստի տան համար սենյակ եյին հատկացրել Ստեփանավանի մանկական քաղաքում: Յերբ տեղ հասանք, մեզ այդ սենյակում տեղափորեցին: Հետեւալ որը մեզ բոլորիս բաղնիս տարան, մաքուր լողացանք ու փոխեցինք մեր սպիտակեղենը: Այնուհետև շաբաթը մեկ անգամ բաղնիս եյինք գնում ու սպիտակեղեններս փոխում:

Որերը մենք այսպես ելինք անցկացնում: Առավոտիան շուտ վեր ելինք կենում, մարդանք կատարում, լվացվում ու թեյ խմում: Թեյից հետո մի ժամ հանգստանում ելինք և ապա ման գալու գնում—փոքրիկ եքսկուլսիաներ կատարում զյուղի մեջ կամ դեպի անտառն ու հարեւան գյուղերը: Մեզ գեղավարող ուսուցիչն ասում եր՝ հեռավոր եքսկուլսիան կհոգնեցնի, իսկ ձեզ համար այդ վատ ե, լավ չեք կազդուրվի:

Ճաշից հետո սենյակում 2 ժամ հանգստանում ելինք և ապա գուրս գալիս բակն ու խաղեր սարքում: Վերջում թեյ ելինք խմում ու շուտ պառկում քնելու:

Յերբեմն ոգնում ելինք մանկական քաղաքի սաների ու սանուհիների զյուղատնտեսական աշխատանքներին: Մանկական քաղաքը հողամասեր ունի. այդ հողերը մանկական քաղաքի սաներն ու սանուհիներն են մշակում զյուղատնտեսի և ուսուցիչների ղեկավարությամբ:

Հանգստի տանը մեզ շատ լավ ելին կերակրում, թեյ, կաթ, կարագ, մեղր, ճաշ և ընթրիք և դրա համար մենք քաղաք վերադարձնք բոլորովին առողջ ու կազդուրված:

Յես յերկու և կես կիլո ավելացա: Եմիս Գասպարյան

## ՑԱՆԿ

ՑԵՐԵԿԱ

### I. Առավոտան տանը

|   |   |
|---|---|
| Ժամանակ և վեր կենալ . . . . .   | 3 |
| Ամեն շաբաթ մենք լողանում ենք բաղնիսում .                                      | 4 |
| Մի նախատիր ինձ մայրիկ, վոր շատ սապոն եմ<br>բանեցնում . . . . .                | 5 |
| Ինչու իս վատ եմ լսում . . . . .   |   |
| Ի՞նչպես եր կապարինեն կառավարում տունը<br>Գրիգորի դպրոց գնալուց հետո . . . . . | 6 |
| Խուսափիր փոշոց . . . . .  | 7 |
| Տարվա բոլոր յեղանակներին մաքուր ոդն ոդ-<br>տակար և . . . . .                  | 7 |
| Ինչու մայրիկն իրեն վատ զգաց . . . . .   | 8 |
| Առողջարար և արդյոք շատ տաք սենեկում<br>ապրելը . . . . .                       | 9 |
| Զերմաշափի մասին . . . . .   | 9 |

### II. Դպրոցում

|   |    |
|---|----|
| Գրիգորը հերթապահ . . . . .  | 12 |
| Ո՞վ և Զենները, և ինչու համար են ծաղիկը<br>ծեծում . . . . .                  | 12 |
| Ի՞նչպիս մենք մաքրության և առողջության ան-<br>կյուն կազմակերպեցինք . . . . . | 13 |

|   |    |
|---|----|
| Ահա թե ինչպիսի պլակատներ պետք է կախ աըլր-   |    |
| վեն մեր մաքրության և առողջության ան-        |    |
| կունում . . . . .                           | 15 |
| Թուլամորթ չեմ յես (վոտանավ.) . . . . .      | 15 |
| Շատ տաք մի հագնվիր . . . . .                | 16 |
| Եես վոչ մատս եմ բերանս տանում, վոչ մատիտս   |    |
| և վոչ ել մի ուրիշ բան, վոր կարող ե կեղ-     |    |
| տոտ լինել . . . . .                         | 17 |
| Ի՞նչո՞վ են վկասակար միջատները և ի՞նչպես պի- |    |
| տի պակքարել նրանց դեմ . . . . .             | 18 |
| Ի՞նչպես ճիճուն բնակություն հաստատեց աղիք-   |    |
| ներիս մեջ . . . . .                         | 20 |

### III. Դպրոցից եետո—տանը

|  |    |
|--|----|
| Ճաշելիս . . . . .                        | 22 |
| Ի՞նչպես պետք ե քիթը մաքրել . . . . .     | 23 |
| Գրիգորը խնդիր և լուծում . . . . .        | 23 |
| Գիրքը չաղտառես . . . . .                 | 23 |
| Ուտելիքը էերբեք բաց մի թողնի . . . . .   | 24 |
| Ընթրելիս . . . . .                       | 24 |
| Քնելուց առաջ ատամներդ մաքրիր . . . . .   | 25 |
| Մաքուր պառկիր—մաքուր անկողնում . . . . . | 26 |
| Որոր (վոտանավոր) . . . . .               | 26 |

### IV. Վոր պատի լքագիրն և լավը

|  |    |
|--|----|
| Չեսք տալը վերանում ե . . . . .               | 27 |
| Ուր արձն ու լույսը մուտք չեն դորձում, աճնտեղ |    |
| հաճախ բժիշկն և մանում . . . . .              | 27 |
| Ի՞նչպես եր խնամում Սիրուշն իր փոքրիկ քրոջը   | 28 |

|   |    |
|---|----|
| Սովորիր կանոնավոր շնչել . . . . .           | 29 |
| Փողոցից կեղտոտ փոշի սենյակ մի բեր . . . . . | 29 |
| Ի՞նչո՞ւ կոտիկն անտառում գտնվող դպրոցում եր  |    |
| սովորում . . . . .                          | 29 |

### V. Տարափոխիկ (վարակիչ) երվանդություններ

|   |    |
|---|----|
| Ի՞նչո՞ւ չպետք ե հատակին թքել . . . . .    | 31 |
| Ի՞նչն ե վարակիչ հիվանդությունների պատճառը | 32 |
| Պաստորի մեծ խելքն ու հովիչ մեծ սիրտը . .  | 33 |
| Ի՞նչ մեծության են լինում բակտերիաները . . | 34 |
| Վարն և ուժեղ—ցուրտը թե արել . . . . .     | 34 |
| Ի՞նչո՞ւ պետք ե քթով շնչել . . . . .       | 35 |
| Ի՞նչպես են մարդիկ իրար վարակում . . . . . | 35 |
| Ի՞նչքան բակտերիա կա ողում . . . . .       | 36 |
| Թոքախտի մասին . . . . .                   | 36 |
| Ի՞նչպես կատարինեն այցելեց ընկերունուն հի- |    |
| վանդանոցում . . . . .                     | 37 |
| Ի՞նչպես ենք մենք կովում բակտերիաների դեմ  | 38 |

### VI. Ենչ ես արել ամառն առողջությունգ բարելա-

վելու համար

|  |    |
|--|----|
| Յես արեի տակ այրվում ելի . . . . .         | 40 |
| Յես մանկական հրապարակ ելի գնում . . . . .  | 40 |
| Յես լողանում ելի գետում . . . . .          | 41 |
| Յես լազեր ելի գնացել . . . . .             | 42 |
| Յես ալլս խակ պտուղներ չեմ ուտի . . . . .   | 43 |
| Յես բժշկում ելի Դրիմում . . . . .          | 43 |
| Ի՞նչ իմացա յես դիֆտոհիրնտի մասին . . . . . | 45 |
| Յես հանգստի տուն ելի գնացել . . . . .      | 46 |

224



3 353

ԳԻՒԸ 12 ԿՈՊ. Մ. (1<sup>3</sup>/<sub>4</sub> մամուչ)



В. Н. Фалькнер

## Будем здоровы и сильны

Госиздат ССР Армении  
Эревань - 1930